
**ՈՐՈՇ ԵՎԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԻՆՏԵՐՊՐԵՏԱՑԻԱ» ՏԵՐՄԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ս. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ժամանակակից փիլիսոփայական և մեթոդաբանական գրականության մեջ ինտերպրետացիայի հասկացությունը ձեռք է բերել բազմանշանակություն, քանի որ այն կիրառվում է որպես՝ ա) նշանային համակարգերի ինտերպրետացիա, բ) փաստերի ինտերպրետացիա, գ) տեքստերի ինտերպրետացիա:

Դեռևս 20-րդ դարի 50-60-ական թվականներից մեթոդաբանական հակադիր ճամբարներում՝ պոզիտիվիզմում և հերմենևտիկայում, «ինտերպրետացիան» արդեն օգտագործվում էր միանգամայն տարբեր մեթոդաբանական նշանակություններով. պոզիտիվիստական կառուցվածքասեմիոտիկականին հակադրվում էր հերմենևտիկական էքզիստենցիալ-մշակութաբանականը: Խորհրդային փիլիսոփայական և մեթոդաբանական գրականության մեջ ևս ինտերպրետացիան լայն քննարկման առարկա էր դարձել: Այսպես, Վ. Ա. Շտոֆֆն առանձնացնում է գիտական իմացության գործընթացում իրագործվող երեք կարգի ինտերպրետացիաներ. 1. տրամաբանական-մաթեմատիկական ձևական նշանային համակարգերի, 2. մաթեմատիկական բնագիտության հավասարումների, 3. գիտափորձի արդյունքների, հաստատված գիտական փաստերի: Նշելով այն հանգամանքը, որ 1-ին և 2-րդ տիպի ինտերպրետացիաների տարբերությունը էական չէ, և դրանք կարելի է դիտել որպես մեկ տիպ, նա ընդգծում է, որ այդպիսով ստացվում են միմյանցից միանգամայն տարբեր և իմացության գործընթացում նույնիսկ միմյանց հակադիր ինտերպրետացիայի երկու հիմնական տիպեր. մաթեմատիկայում, տրամաբանության մեջ, մասամբ նաև մաթեմատիկական ֆիզիկայում ձևական տեսությունների կառուցման ժամանակ «ինտերպրետացիա» ասելով նկատի են ունենում տեսության մեկնաբանությունը նրա օբյեկտիվ բովանդակության, տերմինների նշանակության, մաթեմատիկական արտահայտությունների ֆիզիկական իմաստի և այլնի վերհանման միջոցով, իսկ էքսպերիմենտալ հետազոտության մեջ՝ ֆիզիկական, քիմիական և նման երևույթների ուսումնասիրության ժամանակ, այդ տերմինն օգտագործելով, նկատի են ունենում այդ երևույթների և տվյալների մեկնաբանությունն առավել ընդհանուր տեսանկյունից, դրանց բացատրությունն արդեն գոյություն ունեցող տեսությունների կամ առաջադրվող վարկածների օգնությամբ¹: Ուստի կարելի է պնդել, որ խոսքը մեթոդաբանական տեսակետից ևս միմյանցից միանգամայն տարբեր մեթոդների մասին է, որոնք այդ պատճառով չեն կարող արտահայտվել միևնույն՝ «ինտերպրետացիա»

¹ Տե՛ս **В. А. Штофф**, Моделирование и философия, М., 1966, էջ 169-170:

տերմինով: Այն դեպքը, երբ նկատի են ունենում ձևական տեսությունների մեկնաբանությունը նրա օբյեկտիվ բովանդակության վերհամման միջոցով, կարելի է անվանել ինտերպրետացիա, քանզի ինտերպրետացիայի մեթոդը, հանգամանալից մշակվելով տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչների կողմից, այդ հասկացությանն արդեն խիստ որոշակի նշանակություն է հաղորդել: Իսկ մյուս դեպքը, երբ նկատի են ունենում երևույթների և տվյալների մեկնաբանությունն առավել ընդհանուր տեսանկյունից, ըստ էության համապատասխանում է փաստերի մեկնաբանության մեթոդին:

Ինտերպրետացիան առաջին հերթին **սեմանտիկական կատեգորիա է**, քանի որ մաթեմատիկայում և տրամաբանության մեջ սովորաբար ինտերպրետացիա ասելով նկատի են ունենում ձևայնացված լեզվի կամ հաշվի սիմվոլներին իմաստ, նշանակություն վերագրելը: Ինտերպրետացիայի շնորհիվ նշաններն «առանց նշանակության» օժտվում են կոնկրետ սեմանտիկական նշանակությամբ. տալ ինտերպրետացիա նշանակում է ցույց տալ նշանների նշանակությունը²:

Քանի որ ձևական-դեդուկտիվ կառույցներում մենք վերացարկում ենք ելակետային արտահայտությունների իմաստից և համապատասխանաբար նրանց ճշմարտության հարցից, ապա նման ձևով կառուցված տեսությունն ըստ էության դեռ գիտելիք չի տալիս: Իսկ ինտերպրետացիան ձևական սինտաքտիկական համակարգը որոշակի սեմանտիկական և ճշմարտային կանոնների միջոցով վերածում է սեմանտիկականի³: Այդպիսի ինտերպրետացիան հաճախ անվանում են սեմանտիկական՝ ի տարբերություն էմպիրիկ ինտերպրետացիայի: Եթե սեմանտիկական ինտերպրետացիան համապատասխանություն է ստեղծում տեսական լեզվի՝ որպես նշանային համակարգի, և առարկայական ոլորտի միջև, ապա էմպիրիկ ինտերպրետացիան համապատասխանություն է ստեղծում տեսական լեզվի և դիտարկման լեզվի միջև⁴: Էմպիրիկ ինտերպրետացիան կոչված է ապահովելու՝ ա) դիտարկվող երևույթների վերաբերյալ տեխնիկական տերմինների հասկացումն առօրյա լեզվի հիման վրա, բ) եզրակացությունների և տեսությունների հիման վրա կատարված կանխատեսումների դիտարկելիությունը, գ) տեսական դրույթների հաստատումը փորձնական եղանակով⁵: Հետևաբար, «էմպիրիկ ինտերպրետացիան տեսական համակարգի տերմինների այնպիսի սահմանումն է, երբ որպես նրանց նշանակություն արտահայտվում են որոշակի օբյեկտների դիտարկումների էքսպերիմենտալ արդյունքները, որոնք որպես «փաստեր կամ դեմոտատներ» են դիտարկվում»⁶: Այլ կերպ ասած՝ էմպիրիկ ինտերպրետացիայի շնորհիվ հաստատվում են տեսական տերմինների էմպիրիկ նշանակությունները:

² Տե՛ս **Л. А. Абрамян**, Гносеологические проблемы теории знаков, Ер., 1965, էջ 219:

³ Տե՛ս **В. С. Швырев**, Некоторые вопросы логико-методологического анализа отношения теоретического и эмпирического уровней научного знания, в сб.: «Проблемы логики научного познания», М., 1964, էջ 71-72:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 73:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 70:

⁶ «Логика научного исследования». М., 1965, с. 134.

Էյնշտեյնը, բարձր գնահատելով ձևայնացման մեթոդի դերը, գտնում էր, որ աքսիոմատիկայի հիմնական նվաճումը տրամաբանական-ձևականը նրա օբյեկտիվ կամ ակնառու բովանդակությունից հստակ սահմանազատելն է: Բայց մյուս կողմից, ըստ նրա, չպետք է մոռանալ, որ մաթեմատիկական ընդհանրապես և երկրաչափությունը մասնավորապես իրենց ծագումով պարտական են իրականության մեջ գոյություն ունեցող իրերի վարքի մասին ինչ-որ բան իմանալու անհրաժեշտությանը⁷: Մինչդեռ ձևական տեսությունների ձևայնացումը, ճշգրտելով տեսության հասկացությունների բովանդակությունը, գրկում է այն օբյեկտիվ իրականության հետ իր ունեցած կապերից: Որքան ավելի ձևայնացված է տեսությունը, այնքան ավելի վերացական բովանդակություն ունեն նրա հասկացությունները, և այնքան ավելի թույլ է արտահայտված նրա կապն օբյեկտիվ իրականության հետ: Սակայն այնքան ժամանակ, քանի դեռ գտնված չէ գոնե մեկ բովանդակային բնագավառ, որի հետ տվյալ նշանային համակարգը կարելի է հարաբերակցել, դրա ճանաչողական արժեքի հարցը, պետք է ենթադրել, մնում է բաց, քանի որ ինտերպրետացնել նշանային համակարգը նշանակում է նրա մեջ մտնող նշանները հարաբերակցել բովանդակային որևէ բնագավառի տարրերի հետ⁸: Իսկ նշանային համակարգը կարող է հարաբերակցվել բովանդակային գիտելիքի կամ առարկայական տարրեր բնագավառների հետ: Հետևաբար կարելի է ասել, որ ինտերպրետացիայի մեթոդը աքսիոմատիկ-դեդուկտիվ համակարգերում գործառնվում է որպես **ձևայնացման մեթոդին հակադիր** մեթոդ:

Ակնհայտ է, որ ինտերպրետացիան իր այս ընկալմամբ չի համապատասխանում փաստերի մեկնաբանության մեթոդին, քանի որ մեկնաբանությունը ամենից առաջ գիտելիքի բովանդակային բնագավառների ուսումնասիրության մեթոդ է, որում միտքն օբյեկտիվ իրականության փաստերից գնում է դեպի դրանց առաջացման պատճառների ու հիմքերի բացահայտումը, որի ընթացքում այդ երևույթները, այլ երևույթների հետ համադրվելով, նոր իմաստ կամ նշանակություն են ստանում: Հետևաբար, դա իրականության արտացոլման յուրահատուկ եղանակ է, որի «իմացաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ կարևորը դիտարկվող երևույթների միմյանց հետ և այլ երևույթների հետ ունեցած կապի հետազոտական որոնումն է եղած տվյալների հիման վրա»⁹:

Մեկնաբանության մեթոդը ինտերպրետացիայից տարբերվում է իր ճանաչողական և գործառնական հնարավորություններով: Դրանք բխում են ամենից առաջ նրա տրամաբանական կառուցվածքից, որի առանձնահատկությունն էլ ոչ լրիվ էքսպլանանսն է^{*}: Ընդհանրապես, էքսպլանանսն

⁷ Տե՛ս **А. Эйнштейн**, Геометрия и опыт. Собрание научных трудов, т. 2, М., 1966, էջ 84:

⁸ Տե՛ս **Л. А. Абрамян**, նշվ. աշխ., էջ 221:

⁹ **Т. И. Ойзерман**, Исторические судьбы плюрализма философских учений // Вопросы философии, 1991, № 12, с. 125.

*Քանի որ գիտական հետազոտության գործընթացում մեկնաբանությունը նախորդում է գիտական բացատրությանը, նպատակահարմար ենք համարում օգտվել վերջինիս կառուցվածքային տարրերն արտահայտող տերմինաբանությունից, այն է՝ էքսպլանանս-բացատրող, էքսպլանանդում-բացատրելի:

այն տրամաբանական հիմքն է, որն ապահովում է նոր հայտնաբերված փաստի՝ էքսպլանանդումի ինտեգրումն արդեն հայտնի փաստերի համակարգ: Լրիվ էքսպլանանդ, որ գիտական բացատրության տրամաբանական հիմքն է, անհրաժեշտորեն ընդգրկում է ընդհանուր օրենքը և էքսպլանանդումին նախորդող պայմանների նկարագրությունը: Իսկ մեկնաբանության էքսպլանանդ ոչ լրիվության պատճառով պարունակում է կա՛մ ընդհանուր օրենքն առանց նախորդող պայմանների նկարագրության (լրիվ կա՛մ մասնակի), կա՛մ նախորդող պայմանների նկարագրությունն առանց ընդհանուր օրենքի, կա՛մ մոտիվացիոն սկզբունքներ և տելեոլոգիական հեռանկար պարունակող պնդումներ, այդ պատճառով նրանում արտահայտված են լինում էքսպլանանդումի գոյության միայն անհրաժեշտ պայմանները, և մեկնաբանությունը ձեռք է բերում էնտիմենային մտահանգման ձև: Դա մեկնաբանության էքսպլանանդ գրկում է կանխատեսական հնարավորությունից, հետևապես նաև փորձնական ստուգելիությունից, որոնք գիտական բացատրության ժամանակ ապահովում են եզրակացության թե՛ տրամաբանական ճշտությունը (որը տեղի ունի և՛ անհրաժեշտ, և՛ բավարար պայմանների առկայության դեպքում), թե՛ ճշմարտությունը¹⁰: Այդ պատճառով մեկնաբանության շնորհիվ ստացվում է ոչ թե հավաստի, այլ հավանական գիտելիք: Սակայն դա ամենևին էլ չի նսեմացնում փաստերի մեկնաբանության մեթոդի իմացաբանական նշանակությունը: Գիտական հետազոտության գործընթացում նախորդելով գիտական բացատրությանը՝ մեկնաբանությունն իրագործում է մի շարք կարևոր գործառնություններ: Այն դասակարգում և համակարգում է եղած գիտելիքը՝ նպաստելով դրա ընդհանրացմանը, հետևաբար, կարելի է պնդել, որ օժտված է **գիտելիքի համակարգման** գործառնությով, նոր գիտելիքը ընդգրկում, ինտեգրում է գիտելիքի համապատասխան համակարգում, ուստի իրագործում է **գիտելիքի ինտեգրման** գործառնություն, հնարավորություն է տալիս գիտությանը, անհայտ կա՛մ նոր հայտնաբերված փաստը արդեն հայտնիին հանգեցնելով, ձեռք բերել նոր գիտելիք, ուստի կարելի է ասել, որ օժտված է **էվրիստիկական** գործառնությով, նոր գիտելիքի ինտեգրման ընթացքում դրա և հին տեսության միջև անհամապատասխանության, հակասության դեպքում կարող է նոր կոնցեպցիայի առաջադրման հիմքը կազմել, հետևաբար ունի նաև **գիտելիքի կոնցեպտուալացման** գործառնություն, նոր գիտելիքը ներառելով տրամաբանական-դեդուկտիվ կառուցվածքի մեջ՝ դրանով իսկ հիմնավորում է այն, այսինքն՝ օժտված է **հիմնավորման** գործառնությով, փաստերը համադրելով՝ դասակարգում և համակարգում է գիտելիքը, իսկ քանի որ փաստերի ընտրությունը ուղեկցվում է դրանց ինչ-որ իմաստ կա՛մ նշանակություն վերագրելով, այսինքն՝ համապատասխանաբար արժևորելով, հետևաբար ունի **գիտելիքի արժևորման** գործառնություն: Մեկնաբանությունն օժտված է նաև **էքսպլիկատիվ** գործառնությով, քանի որ փաստերին նոր իմաստ կա՛մ նշանակություն վերագրելով՝ նպաստում է նաև հասկացությունների ճշգրտմանը: Այս հանգամանքը թերևս որոշակի դերակատարում ունի

¹⁰ Տե՛ս **Ս. Վ. Վարդանյան**, Գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերությունների հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2003, № 2, էջ 18-27:

մեկնաբանության մեթոդը ինտերպրետացիայի հետ նույնացնելու գործում, քանի որ ինտերպրետացիայի մեթոդը ևս էքսպլիկատիվ գործառույթ ունի: Սակայն եթե ինտերպրետացիայի դեպքում էքսպլիկացիայի միջոցով ճշգրտվում են ձևայնացված լեզվի սիմվոլների և նշանների իմաստը կամ նշանակությունը՝ դրանք փաստերի հետ հարաբերակցելու միջոցով, ապա մեկնաբանության դեպքում փաստերից ենք գնում դեպի հասկացությունների և դրանց լեզվական արտահայտությունների էքսպլիկացիան: Բացի այդ, էքսպլիկատիվ հնարավորություններով օժտված են տեսական հետազոտության այլ մեթոդներ ևս, ինչպես գիտական բացատրությունը, կանխատեսումը և այլն, բայց դրանք, այնուամենայնիվ, ինտերպրետացիայի հետ չեն նույնանում:

«Ինտերպրետացիայի» երրորդ նշանակությունն ի հայտ է գալիս հերմենևտիկայում: Այստեղ առաջնային իրողություն են դիտվում ոչ թե փաստերը, այլ **տեքստը**: Համապատասխանաբար խոսվում է տեքստերի ինտերպրետացիայի մասին, թեև մեթոդաբանական տեսակետից դա ինտերպրետացիա համարել չի կարելի, քանի որ այն թե՛ իր մեթոդաբանական առանձնահատկություններով, թե՛ իր իմացաբանական նշանակությամբ տարբերվում է ինտերպրետացիայի մեթոդից: Տվյալ դեպքում, անշուշտ, պետք է խոսվի **տեքստերի մեկնության մեթոդի** մասին, թերևս նաև այն պատճառով, որ մենք մեկնիչներ ենք կոչում տեքստերի մեկնությամբ զվաղվող հայ փիլիսոփաների մի ստվար խմբի:

Իհարկե, ցանկացած տեքստ կարող է դիտվել իբրև նշանային համակարգ և ենթարկվել սեմիոտիկական վերլուծության, որը կարող է իրագործվել և՛ սիմտաքտիկայի ու սեմանտիկայի, և՛ պրագմատիկայի տեսանկյունից: Սիմտաքտիկական վերլուծությունը վերաբերում է սեմիոտիկական համակարգի կամ լեզվի ձևական կառուցվածքին, լեզվական արտահայտությունների ձևավորման կանոններին: Սեմանտիկական վերլուծության ժամանակ միշտ գործ են ունենում ինտերպրետացված լեզվի հետ: Ընդ որում, լեզվական արտահայտություններին վերագրվում է մի կողմից որոշակի դեմոտատ, այսինքն՝ առարկան, որը դրանք նշանակում կամ անվանում են, իսկ մյուս կողմից՝ այդ դեմոտատին հատուկ իմաստը: Սեմիոտիկական համակարգի պրագմատիկական վերլուծությունը կապված է այդ համակարգի կամ լեզվի պրակտիկ օգտագործման հետ¹¹: Սակայն, հերմենևտիկայում թեպետև կարելի է նկատել տեքստի կառուցվածքային վերլուծության որոշակի տարրեր, այնուամենայնիվ մեկնության մեթոդն այստեղ ուղղված է ոչ թե օբյեկտիվ չափանիշների վերհանմանը, այլ հեղինակի սուբյեկտիվ նկրտումների բացահայտմանը: Տեքստն այստեղ հեղինակի ինքնաարտահայտման միջոցն է, և մեկնությունը հնարավորություն է տալիս այն հասկանալու համար ոչ միայն **ներթափանցել հեղինակների հոգեբանական վիճակների մեջ**, այլև ավելին. Շլայերմախսերը կարծում է, որ մեկնության հիմնական խնդիրը «համապատասխան խոսքը հեղինակից ավելի լավ և ապա նրա համեմատ լավագույնս հասկանալն է»¹²:

¹¹ Տե՛ս **Գ. Ի. Рузавин**, Проблема понимания и герменевтика, в сб.: “Герменевтика: история и современность”, М., 1985, т. 2 167-168:

¹² **Ք. Մ. Габитова**, Универсальная герменевтика Фридриха Шлейермахера, в сб.: “Герменевтика: история и современность”, М., 1985, с. 74.

Հերմենևտիկական կարելի է բավականին տարաբնույթ մոտեցումների գուգակցում համարել, բայց մի հարցում թերևս համակարծիք են համարյա բոլոր հերմենևտիկ փիլիսոփաները. կարևորը **տեքստերի հասկացումն** է, իսկ մեկնությունը միշտ համարվում է հասկացման կցորդ, «ծայրամաս»: Ըստ Գադամերի՝ «մեկնությունը ինչ-որ մի առանձին գործողություն չէ, որը հետին թվով և ըստ անհրաժեշտության է լրացնում հասկացումը, հասկացումը միշտ մեկնություն է, իսկ վերջինս՝ համապատասխանաբար հասկացման էքսպլիցիտ ձևը»¹³: Ինչպես իրավացիորեն նկատում է Պ. Ռիկորը, «մեկնության այդպիսի միակողմանի կախվածությունը հասկացումից երկար ժամանակ եղել է հերմենևտիկայի հենց ամենամեծ գայթակղությունը»¹⁴: Եվ նա առաջարկում է պարզել հասկացում և մեկնություն հասկացությունների փոխհարաբերությունը. «Կարևոր է տերմինաբանության մեջ ստույգություն պահպանել և «հասկացում» բառն ամրագրել ուրիշի գիտակցության մեջ արտաքին նշանների միջոցով ներթափանցելու ընդհանուր երևույթին, իսկ «մեկնություն» բառն օգտագործել գրավոր ձևի մեջ ամրագրված նշաններին ուղղված հասկացման դեպքում»¹⁵:

Հասկացման և մեկնության հիմնախնդիրների ուսումնասիրության գործում մեծ նշանակություն են ունեցել Վ. Դիլթեյի աշխատանքները: Հասկացման մեթոդը հակադրելով բացատրությանը՝ նա պատմական կամ գրական տեքստերի հասկացումն ու մեկնությունը համարում է անցյալի մշակութային ժառանգության ուսումնասիրության մեթոդ, իսկ տեքստերի հասկացման և մեկնության մեթոդի կարևոր առանձնահատկությունը համարում է **հերմենևտիկական շրջանը**: Ըստ Դիլթեյի՝ ամբողջի հասկացումը հնարավոր է նրա մասերի հասկացման և մեկնության դեպքում միայն, իսկ մասն իր հերթին կարող է հասկացվել միայն ամբողջում: Սակայն, ինչպես նշում է Դիլթեյը, «այս իմաստով մենք բախվում ենք յուրաքանչյուր մեկնության ընդհանուր դժվարությանը. առանձին բառերից ու նրանց գուգակցումից պետք է հասկացվի ամբողջ նախադասությունը, իսկ ամբողջի հասկացումը ենթադրում է առանձին մասերի հասկացումը»¹⁶: Նույնը վերաբերում է նաև ամբողջ ստեղծագործության մեկնությանն ու հասկացմանը, այստեղից արդեն՝ հեղինակի ողջ գրական ժառանգությանը:

Տեքստերի մեկնության գոյաբանականացման առաջին փորձը հերմենևտիկական փիլիսոփայության մեջ արել է Հայդեգերը, որը գտնում է, որ մեկնությունը էքզիստենցիալ կերպով հիմնվում է Dasein-կեցության եղանակ համարվող հասկացման վրա, իսկ հասկացումը ձևավորվում է մեկնության շնորհիվ. մեկնության շնորհիվ «յուրացնում է իր հասկացածը»¹⁷:

Բայց քանի որ Dasein-կեցությունը Հայդեգերի համար մարդկային կեցությունն է, ապա տեքստերի մեկնությունը համապատասխանաբար ձեռք է բերում էքզիստենցիալ-գոյաբանական բնույթ:

¹³ **Х. Г. Гадамер**, Истина и метод. М., 1988, с. 364.

¹⁴ **П. Рикер**, Герменевтика и метод социальных наук. В его кн.: “Герменевтика. Этика. Политика”. М., 1995, с. 3-4.

¹⁵ Նույն տեղում, էջ 3:

¹⁶ **W. Dilthey**, Selected Writings. London, 1976, p. 259.

¹⁷ Տե՛ս **М. Хайдеггер**, Бытие и время. М., 1997, էջ 148:

Այս ամենը վկայում է այն մասին, որ մեկնությունն ունի իր առանձնահատկությունները: Նախ, փաստերի մեկնաբանությունից այն տարբերվում է իմացության իր օբյեկտով, որը տեքստն է, իսկ ինտերպրետացիայից տարբերվում է տեքստի բնույթով, որը շարադրված է ոչ թե արհեստական (ձևական կամ ձևայնացված), այլ բնական լեզվով և ըստ այդմ պարունակում է բազմանշանակության հնարավորություն: Երկրորդ, մեկնության հարակից հասկացությունը հասկացումն է, ավելին՝ մեկնությունը կա՛մ բխում է հասկացումից, կա՛մ անմիջականորեն կապված է նրա հետ: Երրորդ, ի սկզբանե դիտվել է որպես ուրիշի գիտակցության մեջ ներթափանցելու միջոց, ինչի շնորհիվ պատմականորեն ձեռք է բերել էքզիստենցիալ-մշակութաբանական բնույթ: Չորրորդ, իր կառուցվածքով ևս մեկնությունը տարբերվում է թե ինտերպրետացիայից, թե մեկնաբանությունից. մեկնության մեթոդի կառուցվածքային առանձնահատկությունը հերմենևտիկական շրջանն է:

Այսպիսով, «ինտերպրետացիա» են անվանվում միմյանցից տարբեր գիտական երեք մեթոդներ, որոնք, անկասկած, պետք է ստանան իրենց տերմինաբանական տարբերակված արտահայտությունները ևս, առավել ևս այն պատճառով, որ հայերենի հարուստ բառապաշարն այդ հնարավորությունը տալիս է մեզ: Ըստ այդմ, հաշվի առնելով մեթոդաբանական առանձնահատկությունները, առաջարկում ենք «ինտերպրետացիա» տերմինը կիրառել նշանային համակարգերի սեմանտիկական նշանակության պարզաբանման դեպքում, իսկ «փաստերի ինտերպրետացիան» և «տեքստերի ինտերպրետացիան» փոխարինել համապատասխանաբար «մեկնաբանություն» և «մեկնություն» տերմիններով:

С. В. ВАРТАНЯН — *Некоторые соображения относительно применения термина «интерпретация».* — В современной философской и методологической литературе термин «интерпретация» приобрел многозначный характер, поскольку он может пониматься по-разному: а) интерпретация знаковых систем, б) интерпретация фактов, в) интерпретация текстов. Исходя из того, что используемые в указанных областях методы своей методологической спецификой отличаются от метода интерпретации, предлагается «интерпретацию фактов» заменить «истолкованием», «интерпретацию текстов» — «толкованием», а термин «интерпретация» употреблять для пояснения семантического значения знаковых систем.